ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.02.2023Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է Գարիկ Ղամաբարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականության 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի արտադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» , «Գառզուի անվան արվեստի դպրոց» և «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին:

7. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 33 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:
9. Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին:
10. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
11. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամներին հաստատելու մասին:
12. Չարենցավան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:
13. Չարենցավան համայնքի 07-015-0340-0011 ծածկագրով հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
14. Սերվիտուտի իրավունքով տրամադրված համաձայնագրում փոփոխություն կատարելու տալու մասին:
15. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
16. Սեփականություն իրավունքով քաղաքացիներին և իրավաբնական անձանց պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
17. Քաղաքացիների կողմից անհատական բնակարանային շինարարության համար հատկացված հողատարածքից ավել զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով թույլտվություն տալու մասին:
18. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
19. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծին համաձայնություն տալու մասին:
20. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
21. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 16 **դեմ - 0** **ձեռնպահ -10**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 . Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի. ***առաջարկում եմ.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի /տարեկան/ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելու պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-16 դեմ-10 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի սեփականության 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝ ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի սեփականության 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի/կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-14 **դեմ-12** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Գ.Ամբյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատվել է 2022 թվականի դեկտեմբերի 26-ին և չի արտացոլվել 2023 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները՝ ***առաջարկում եմ***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 79-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ (հատված 1-6):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

   Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-24 **դեմ-2** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան 3-րդ թաղ., 13 շենքի 10 բն. բնակիչ Քրիստինե Միխայիլի Անտոնյանի 2023 թվականի փետրվարի 1-ի թիվ 508-16 , Չարենցավան քաղաքի 4-րդ թաղ. 8-րդ շենքի 35 բն. բնակիչ Անդրանիկ Բադալի Բրուտյանի 2023 թվականի փետրվարի 3-ի թիվ 577-16, Չարենցավան քաղաքի 2-րդ թաղ. 8-րդ շենքի 10բն.բնակիչ Սեդա Խաչիկի Ենոքյանի 2023թ. փետրվարի 7-ի թիվ 620-16, Արզականի գյուղի Նեղուցի փ. 30 տան բնակիչ Կամո Լիթմիլայի Ստեփանյանի 2023 թվականի փետրվարի 3-ի թիվ 570-16, և Արզական գյուղի Սարալանջ փ. 3/1 տան բնակիչ Նոնա Յուրիկի Եղիազարյանի 2023 թվականի փետրվարի 3-ի թիվ 569-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ***.

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Քրիստինե Միխայիլի Անտոնյանին***,
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ, ***Անդրանիկ Բադալի Բրուտյանին***:
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Կամո Լիթմիլայի Ստեփանյանին***:
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Նոնա Յուրիկի Եղիազարյանին:***
5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 80.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Սեդա Խաչիկի Ենոքյանին:***
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի արտադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու մասին:

/Զեկ.Գ.Գրիգորյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Գառզուի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Արզական գյուղի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 4-ի:
5. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 5-ի:
6. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 6-ի:
7. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 14-ի «Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Գառզուի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակեպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 38, 2014 թվականի նոյեմբերի 13-ի «Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ա.խաչատուրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 68, Արզական համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ա, 2009 թվականի հունվարի 15-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 11 որոշումները:
8.Հանձնարարել կազմակերպությունների տնօրեններին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու Իրավա-հասարակական հարցերի և Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովները տվել են դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-16 **դեմ-10** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» , «Գառզուի անվան արվեստի դպրոց» և «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին:

/Զեկ.Գ.Գրիգորյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճները ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար՝ մեծ դահլիճ՝ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, փոքր դահլիճ՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

1) Համայնքային, ինչպես նաև հերոս ազատամարտիկների հիշատակին նվիրված միջոցառումների համար «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճները տրամադրել անվճար:

2. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Գառզուի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճը ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

1) Համայնքային, ինչպես նաև հերոս ազատամարտիկների հիշատակին նվիրված միջոցառումների համար «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճը տրամադրել անվճար:

3. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճները ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար մեծ դահլիճ՝ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ, երկու փոքր դահլիճ՝ յուրաքանչյուրը 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:

1) Ուսումնական մարզումներ անցկացնելու դեպքում սահմանել վարձավճար՝ 1 /մեկ/ ժամի համար 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային և մարզային առաջնությունների, ինչպես նաև հերոս ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշամրցաշարների համար «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճները տրամադրել անվճար:

4. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին» թիվ 9 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 33 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.Ա. Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34 հոդվածներով՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի «Չարենցավան համայնքի արտադպրոցական և նախադպրոցական կրթություն իրականացնող ՀՈԱԿ-ների սաների համար ծնողական վարձավճարի զեղչեր սահմանելու մասին» թիվ 33 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի բ) ենթակետի «վիրավոր ազատամարտիկների երեխաների» բառերը փոխարինել «սահմանափակ կարողություններով ծնողի կամ երեխայի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:
Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

/Զեկ.Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:/կցվում է/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9. ***Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին***:

/Զեկ.Ս.Մուրադյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 324-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունները և լրացումները կատարելու համար՝

1) ՈՒԺը կորցրած ճանաչել անվանացանկի հետևյալ կետերը՝

1-ին՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-1) , **7-րդ՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-7), **17-րդ՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-17) և **22-րդ՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-22) կետերը:

2) Անվանացանկը լրացնել հետևյալ կետերով՝

ա). համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջատար մասնագետ-սոցիալական սատարող» (ծածկագիր՝ 3.1-28)
բ). համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել նոր **14-րդ կետով՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան» (ծածկագիր՝ 2.3-14), **15-րդ կետով՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ» (ծածկագիր՝ 2.3-15), **16-րդ կետով՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-16) , **17-րդ կետով՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-17), **18-րդ կետով՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-18) կետերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-14 **դեմ-2** **ձեռնպահ-10**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

10 . ***Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով. ***առաջարկում եմ.***

/Զեկ.Ս.Մուրադյան/

1. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 78-Ա որոշման 15-րդ հավելվածը (Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի 2023թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) լրացնել նոր 23-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ՝

23	հավաքարար	–	100000-104000		1		0	0	104000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

11. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամներին հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 84-Ա որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 1-ին ենթակետը, հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 25-ի N 21 կարգադրությունը, Չարենցավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամների թեկնածուների ընտրության նպատակով ստեղծված հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 31-ի N 1 արձանագրությունը, Չարենցավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինները (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին) ձևավորելու նպատակով՝ ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Աշոտ Ծերունյան- Զարգացման ծրագրերի և ՏՏ բաժնի պետ

2) Գայանե Աֆյան- ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ
3) Արսեն Խլղաթյան –ավագանու անդամ
4) Մարինե Հարությունյան-«Լիկիու երկիր» ՀԿ նախագահ
5) Ալեքսանդր Վիրաբյան-քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ
6) Համլետ Խալաթյան-նախաձեռնող խմբի անդամ
7) Գևորգ Հակոբյան-նախաձեռնող խմբի անդամ
8) Լուսինե Ծատուրյան- համայնքի ակտիվ բնակիչ
9) Քրիստինե Ղազարյան- համայնքի ակտիվ բնակիչ
10) Վարդան Գալեչյան- համայնքի ակտիվ բնակիչ

2. Հաստատել Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Վարուժան Թովմասյան- քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության, բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
2) Անուշ Ավետիսյան- քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության, բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
3) Ռուդիկ Սահակյան- քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության, բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի առաջատար մասնագետ
4) Արևիկ Այվազյան-աշխատակազմի առաջատար մասնագետ
5) Գևորգ Գևորգյան- ավագանու անդամ
6) Վարդան Պապոյան- համայնքի ակտիվ բնակիչ

3. Հաստատել Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի անդամներին՝

1) Արթուր Փանոսյան-համայնքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջին կարգի մասնագետ
2) Գառնիկ Բեգլարյան համայնքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ
3) Վահագն Մարգարյան- «Ա.Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
4) Մերի Սարադյան- «Գառզուի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
5) Սարգիս Վարդանյան-ավագանու անդամ
6) Սաթենիկ Մեհրաբյան-«Ապրելու երկիր» կուսակցության անդամ
7) Վալերի Մուքայելյան-քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ

4. Խորհրդակցական մարմինները գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

5. Խորհրդակցական մարմինների անդամները տվյալ Խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Նախագիծը դրվեց քվեարկման առաջարկված լրացումներով և փոփոխություններով:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:
Կողմ- 13 **դեմ-10** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

12. ***Չարենցավան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:***

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները. ***առաջարկում եմ.***

1.Հաստատել Չարենցավան քաղաքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

13. Չարենցավան համայնքի 07-015-0340-0011 ծածկագրով հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկ. Բ. Բալբաբյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 19.01.2006 թվականի թիվ 28-Ն որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի գլխավոր հատակագծի. ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի 07-015-0340-0011 կադաստրային ծածկագրով հողատարածքի 0,10722 հա հողամասի նպատակային նշանակությունը /հատակագիծը կցվում է/, համաձայն հաստատված գլխավոր հատակագծի, համարել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների արդյունաբերական օբյեկտների հողատարածք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

14. Սերվիտուտի իրավունքով տրամադրված համաձայնագրում փոփոխություն կատարելու տալու մասին:

/Զեկ. Բ. Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով ՌՌՌ հանքային ջրերի գործարանի տնօրենի 27.06.2022 թվականի թիվ 2618/04 գրությունը. ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն 10 տարի ժամկետով երկարացնելու ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Ալափարս 5-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 1/5 հասցեում գտնվող 0.00643 հա մակերեսով հողատարածքի անվճար սերվիտուտի ժամկետը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Լսեցին.

15 Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետով և հաշվի առնելով Էդգար Պետրոսյանի 05.08.2022 թվականի թիվ 3299/07 դիմումը. ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել 25 տարի ժամկետով համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 0.6895 հա մակերեսով հողատարածքը՝ տարեկան 250.0 հազար դրամ վարձավճարով տրամադրելու Էդգար Պետրոսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի ընդունումը Չարենցավան համայնքի ավագանու անդամների բազում քննարկումներից հետո՝ կապված վարձավճարի բարձրացման հետ, հետաձգվեց:

Որոշումը չընդունվեց:

Լսեցին.

16 Սեփականություն իրավունքով քաղաքացիներին և իրավաբնական անձանց պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Արման Բաբոյանի, Նորա Մաթևոսյանի, Գոռ Տավարացյանի, Վահե Հարությունյանի և «Վիտալենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը. ***առաջարկում եմ.***

1. ***Արման Բաբոյանին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-008-0262-0045 ծածկագրով 0.394 հա մակերեսով գյուղատնտեսական հնդավոր հողատեսքից 560քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
2. ***Նորա Մաթևոսյանին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-008-0201-0182 ծածկագրով 7.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքից 4000 քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
3. ***Գոռ Տավարացյանին և Վահե Հարությունյանին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-015-0156-065 ծածկագրով 0.1426 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողատեսքից 165 քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

17 Քաղաքացիների կողմից անհատական բնակարանային շինարարության համար հատկացված հողատարածքից ավել զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Մ. Սիմոնյանի և Վ. Կարապետյանի դիմումները ***առաջարկում եմ.***

1. Առաջին պետական գրանցում կատարելու համար Մինաս Սիմոնյանին և իր ընտանիքի անդամներին պատկանող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք Սարալանջ թաղամաս 1-ին փողոց թիվ 32 հասցեում գտնվող 901.9 քմ մակերեսով հողատարածքի 120 քմ նկատմամբ ճանաչել նրանց սեփականության իրավունքը և թույլատրել ուղղակի վաճառքի եղանակով՝ կադաստրային արժեքի 30% արժեքով օտարելու 181.9 քմ մակերեսով հողատարածքը :

2. Առաջին պետական գրանցում կատարելու համար Վարդան Կարապետյանին և իր ընտանիքի անդամներին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Գործարանային թաղամաս 3-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող 753.7 քմ մակերեսով հողատարածքի 80 քմ նկատմամբ ճանաչել նրանց սեփականության իրավունքը և թույլատրել ուղղակի վաճառքի եղանակով՝ կադաստրային արժեքի 30% արժեքով օտարելու 273.7 քմ մակերեսով հողատարածքը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

18 Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունները. ***առաջարկում եմ.***

1. 07-015-0104- 0079 ծածկագրով 0.01914 հա, 07-015-0104- 0077 ծածկագրով 0.01963 հա և 07-015-0104-0073 ծածկագրով 0.04664 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հողատեսքերի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողեր:

2. 07-015-0136-0010 ծածկագրով 1.0 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության

գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

3. 07-015-0231-0031 ծածկագրով 0.1884 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր:

4. 07-019-0201-0048 ծածկագրով 0.0351 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

19. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծին համաձայնություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդված դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Մուշեղ Մուշեղյանի դիմումը. ***առաջարկում եմ.***

1. Տալ հավանություն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու ՀՀ կառավարության որոշման նախագծին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-24 **դեմ-0** **ձեռնպահ-2**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

20. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Ալիսա Նադարյան	3-1-52	2300000	Սեփականություն	Անհատույց
2.	Ալիսա Նադարյան	3-1-76/77	4200000	Սեփականություն	Անհատույց
3.	Մաքսիմ Միրումյան	3-1-9	1800000	Սեփականություն	Անհատույց
4.	Մաքսիմ Միրումյան	3-1-15	2200000	Սեփականություն	Անհատույց
5.	Սամվել Կարախանյան	4-25-1	2500000	Սեփականություն	Անհատույց
6.	Աշխեն Մանվելյան	3-37-38	14700000	Սեփականություն	Անհատույց
7.	Սեդմարա Սարգսյան	3-29-6	16200000	Սեփականություն	Անհատույց

2.Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

21. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով .***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ հերթական նիստի օր և ժամը սահմանել 2023 թվականի մարտի 14-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Խլղաթյան Արսեն
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ
Պողոսյան Մնացական
Խեչոյան Անահիտ
Պապոյան Դավիթ
Բաբայան Նարեկ
Բալյան Աննա
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորիկ
Պալյան Գարիկ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ